

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒՆ

Արամ Սիմոնյան-ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ



*Հենրի Մորգենթաու, Ամերիկյան դեսպանը Կոստանդնուպոլսում 1913-1916թթ.*

(Այս և մյուս նկարները վերցված են «Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, Garden City New York, Doubleday, Page & Company, 1918» հրատարակությունից<sup>1</sup>):

<sup>1</sup> <http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/comment/morgenthau/MorgenTC.htm>

Մարդկությունը XX դար մտավ կարևոր ձեռքբերումներով: Գիտության և տեխնիկայի առաջընթացը ուղեկցվեց տնտեսության մեջ, կենցաղում, այլ ոլորտներում նորամուծություններով: Մարդկությունը քաղաքակրթական առումով զարգացման նոր մակարդակի հասավ: Առաջընթացն ակնհայտ էր նաև կրթության ու մշակույթի բնագավառներում: Հայ ժողովրդի կյանքում ևս տեղի ունեցան կենսական որոշ առաջընթաց քայլեր: Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ երկու մասի՝ Ռուսաստանի և Թուրքիայի մեջ: XIX դարի վերջին XX դարի սկզբին հայ ժողովուրդը ևս գիտության ու մշակույթի ոլորտում ունեցավ նշանակալի ձեռքբերումներ: Միաժամանակ սրվեց հայ ժողովրդի ազատագրության հարցը:

XX դարը հայտնի դարձավ ոչ միայն հսկայական առաջընթացով, այլ նաև այդ նույն դարում մարդկության ձեռքբերումները մթազնեցին երկու աշխարհամարտերի արդյունքում ծավալված ավերածություններով, մշակութային, մարդկային կորուստներով:

Հայ ժողովրդի համար հատկապես ողբերգական էր XX դարի առաջին քառորդը: Հայության համար հայրենիքի ընկալման հիմնական տարածքը Արևմտյան Հայաստանն էր, չնայած Արևելյան Հայաստանը ևս ներառվում էր հայրենիքի կենսատարածքի սահմաններում: Քսաներորդ դարի սկզբում հայ ժողովրդի Ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում դարի մարդկության առաջին ամենամեծ ողբերգությունն էր: Հայ ժողովրդի եղեռնը առանձնանում է իր մի շարք դրսևորումներով և սկզբունքորեն անհերքելի է մի շարք փաստարկներով.

ա) Ցեղի ոչնչացման թուրքական կազմակերպված պետական քաղաքականության դրսևորում:

բ) Հայերի ոչնչացում պետական ապարատի բոլոր լծակներով (բանակ, վարչական ու ոստիկանական ուժեր), մահմեդական ու քրդական մոլեռանդ, հետամնաց խաժամուժի միջոցով:

գ) Հայ ժողովրդի հայրենագրկում—Ցեղասպանությունը հետապնդում էր հայերին իրենց հնօրյա հայրենիքից զրկելու հիմնական նպատակ:

դ) Հաշվի չէր առնվում ոչնչացման ոչ մի միջոց՝ սպանոն ընդունեց սարսափելի ձևեր, որի մասին առկա են բազմաթիվ օտարերկրյա միսիոներների, ներկայացուցիչների, դիվանագիտական ու զինվորական պաշտոնյաների վկայություններից:

Հայոց Ցեղասպանության անհերքելի ապացույցներ են պարունակում թուրքական (Թալեաթ փաշայի, Էնվերի և այլոց հրամանագրերը), դաշնակից երկրների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան), գերմանական, ավստրիական, ամերիկյան պետական արխիվային վավերագրերը և այլն:

Առանձնակի նշանակություն են ձեռք բերում այն փաստագրական-վավերագրական վկայությունները, որոնք բերվում են թուրքիայում միսիոներական և դիվանագիտական աշխատանք կատարած օտարերկրացիների կողմից:

Այդպիսի անգնահատելի վավերագրական, փաստագրական նյութեր առկա են Օսմանյան Կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Չենրի Մորգենթաուի հայտնի վկայագիր աշխատությունում:

Չենրի Մորգենթաուն (ավագ) ծնվել է 1856թ. ապրիլի 26-ին Գերմանիայում, ապա իր ընտանիքը 1865թ. տեղափոխվել է ԱՄՆ: 1877թ. Մորգենթաուն ավարտում է Կոլումբիայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Ձբաղվել է ֆինանսական, դիվանագիտական ու հասարակական գործունեությամբ:

1899-1913թթ. նա խոշոր ֆինանսական ընկերությունների նախագահ է եղել: 1912-1916թթ. մասնակցել է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի նախընտրական քարոզարշավին՝ գլխավորելով Դեմոկրատական կուսակցության ֆինանսական համակարգը<sup>2</sup>:

1913-1916թթ. Մորգենթաուն թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանն էր, որտեղ ներկայացնում էր նաև Դաշնակից երկրների շահերը, որոնք թուրքիայի հետ պատերազմի մեջ էին: Նրա կերպարում ամփոփված էին այդ տարիների թուրքիայում քրիստոնյաների պաշտպանի հատկանիշները և մարդկային խղճմտանքի վառ դրսևորումը:

Չենրի Մորգենթաուն դատապարտել է հայերի ցեղասպանությունը, որպես «ցեղի ոչնչացման արշավ»<sup>3</sup>: Այս քաղաքականությունը խրախուսել է Միացյալ Նահանգների պետքարտուղար Ռոբերտ Լենսինգը 1915թ. հուլիսի 16-ին կարգադրելով, որ «Դեպարտամենտը հավանություն է տալիս Ձեր գործելակերպին՝ դադարեցնելու հայերի հալածանքները»<sup>4</sup>:

ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի վկայությունները ամփոփված են իր հրատարակությունների մեջ.

1. Չենրի Մորգենթաու, Դեսպան Մորգենթաուի պատմությունը (հուշերը), Նյու Յորք, 1918թ., 407 էջ:

2. Չենրի Մորգենթաու, Բոսֆորի գաղտնիքները, 1913-1916; Լոնդոն, 1918, 275 էջ:

Մինչ բուն Մորգենթաուի հուշագրությունների վերլուծությունը, պետք է նշել, որ արխիվային վավերագրերում առկա են բազմաթիվ վկայագրեր, որոնք բնութագրում են Օսմանյան հայաջինջ քաղաքականությունը: 1915թ. հուլիսի 24-ին Խարբերդի

<sup>2</sup> St'u <http://www.eleven.co.il/article/12839>

<sup>3</sup> <http://ru.wikipedia.org.1>

<sup>4</sup> <http://www.genocide-museum.am>

Ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեվիսը դեսպան Յենրի Մորգենթաուի գրում էր. «Այլևս գաղտնիք չէ՝ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջինջ անել հայերին որպես ցեղ, ուղղակի նման նպատակը այնպիսի սառնասրտությամբ ու բարբարոսությամբ, ավելին՝ արդյունավետությամբ էր իրագործվում, որ սկզբում գլխի էլ չէինք ընկնում, թե ինչ է կատարվում... Ես չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի համընդհանուր ու արմատական նախճիր, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեր տարածաշրջանում և ոչ էլ հավատում եմ, որ մարդկային ուղեղն ի զորու է հղանալ ավելի ահավոր ու սատանայական ծրագիր... Տեղի ունեցածը այդպես կկոչվեր նույնիսկ այն դեպքում, եթե թողնեին, որ բոլորն էլ ճանապարհին մեռնեն: Բայց քանի որ մեծ մասն ուղղակի նախճիրի է ենթարկվել, ոչ մի կասկած չի կարող լինել, որ կառավարության հրաման է կատարվել»<sup>5</sup>: Վերոնշյալ փաստաթուղթը բացահայտում է իրականությունը: Բազմաթիվ այսպիսի փաստաթղթեր են պարունակվում Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Վատիկանի և մյուս երկրների արխիվներում:

Այս մասին նկարագրվում է ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի թիվ 106, ապա նաև 2010թ. մարտին ընդունված 252 բանաձևերում: Փաստաթղթում 8-րդ կետը արձանագրում է, որ հայոց ցեղասպանությունը աներկբայորեն փաստող վավերագրեր առկա են Պետական Դեպարտամենտի արխիվային պահպանման 59-րդ խմբում. 867.00 և 867.40 բաժիններում: Դրանք բաց են և հրապարակային<sup>6</sup>:

Յենրի Մորգենթաուից 1919թ. Կ.Պուլսում հայերեն թարգմանվել է «Ամերիկյան Դեսպան Յենրի Մորգենթաուի հուշերը և Յայկական Եղեռնի գաղտնիքները» խորագրով աշխատությունը, որը Երևանում հրատարակվել է 1990թ.: Նույն աշխատությունը ռուսերեն տպագրվել է **“Трагедия армянского народа. История посла Моргантау”**. (Издательство “Центрполиграф”, 2009г., 336 стр.)<sup>7</sup> խորագրով: Գրքում նկարագրված է Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան (1913-1916թթ.) Յենրի Մորգենթաուի մանրամասն հուշագրությունը հայ ժողովրդի ցեղասպանության, դաժան սպանությունների, կտտանքների և արտագաղթի մասին: Ընդ որում, դա ընդամենը մի փոքր մասն է այն ամենից, ինչը ապրեց հալածված այդ ժողովուրդը, նշել է Մորգենթաուն:

Դիվանագետը է խոր վերլուծության է ենթարկել արյունալ դեպքերը՝ իր տեսակետները ամրապնդելով պաշտոնական աղբյուրների վկայակոչմամբ ու

<sup>5</sup> <http://freebooks.do.am>

<sup>6</sup> <http://NEWS.am>

<http://www.genocide-museum.am>

<sup>7</sup> <http://www.kniga.ru/books/313910>

վերլուծությամբ: Աշխատության մեջ առանձնակի տեղ է հատկացված երիտթուրքական ցեղասպանության մեջ և ընդհանրապես Առաջին համաշխարհային պատերազմի ողջ ընթացքում գերմանական իմպերիալիզմի խաղացած դերին:

Վերոնշյալ աշխատության 1-29-րդ գլուխներում հետազոտելով գերմանաթուրքական քաղաքականությունը, դիվանագետը բացահայտում է վերջիններիս հետապնդած նպատակները, ցույց է տալիս աշխարհամարտի նախապատրաստության ընթացքը, պատերազմի մեջ Գերմանիայի սադրանքով Թուրքիայի ներքաշումը, բացահայտում էր նրանց ռազմադիվանագիտական քաղաքականության նրբությունները:

Գրքի 22-րդ գլուխում ներկայացված է Եռյակ համաձայնության երկրների նավատորմի նահանջը Դարդանեղից և նպաստավոր իրավիճակի ստեղծումը պանթուրքիստական ծրագրերի իրականացման տեսանկյունից, որոնց տեսական հիմնադրույթներն ընկած էին իշխող «Միություն և Առաջադիմություն» կուսակցության գործունեության հիմքում:

Հատկանշական է Մորգենթաուի կողմից թուրք ազգային կյանքին և քաղաքականությանը տված բնութագրումը. «Թուրքը սնապարծ և երկչոտ է: Նա առյուծի պես քաջ է, երբ իրերը իրեն նպաստավոր են բայց քծնոտ, զձուձ եւ կորովազուրկ է, երբ ձախողությունները ճնշում են նրան: Եվ հիմա որ՝ պատերազմը նպաստավոր իրավիճակ է ստեղծել կայսրության համար , աչքիս առջև բոլորովին նոր Թուրքի կերպար են տեսնում»<sup>8</sup>:

Մորգենթաուի հուշագրության 22-րդ գլխում, որը խորագրված է «Թուրքի վերադարձը իր նախկին կերպարին», վերհանված են թուրքական նվաճումների ակունքները, թուրքական հսկայածավալ կայսրության ստեղծումը և նրա խաղացած դերը նվաճված երկրների ժողովուրդների արյունալի ճակատագրում:

Մորգենթաուն գտնում է, որ թուրքը միայն մեկ գեներտիկ առանձնահատկություն ունի, այն է՝ ռազմական գործում ունեցած որակները: «Թուրքերը չեն ունեցել այբուբեն, գրավոր մշակույթ, գրքեր, պոետներ, մշակույթ ու ճարտարապետություն, քաղաքներ չեն կառուցել»<sup>9</sup>:

Հեղինակը փաստում է, որ թուրքերն հպատակ ժողովուրդների հետ վարվում էին ինչպես «իրենց ոտքի ցեխը»:

<sup>8</sup><http://www.scribd.com/doc/14191778/Ambassador-Morgenthau-Story-1918>  
[http://manybooks.net/pages/morgenthauhoth09ambassador\\_morgenthau\\_story/](http://manybooks.net/pages/morgenthauhoth09ambassador_morgenthau_story/)  
Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, Garden City New York, Doubleday, Page & Company, 1918, p.134.

<sup>9</sup> Նույն տեղում:

Թուրքիայում երիտթուրքական հեղափոխությունից հետո հռչակված «ազատություն», «հավասարություն», «սահմանադրություն» գաղափարները փոխարինվեցին «պանթուրանիզմով»:<sup>10</sup>



*Օսմանյան կայսրության քարտեզը 20-րդ դարի սկզբին*

Ըստ Մորգենթաուի, Օսմանյան կայսրության շատ տարածքների կորստից հետո որպես կազմակերպված ազգային հանրույթ մնում էին հայերը: «Դեպի ռուսական սահմանը ձգվող վեց նահանգներ կային, որոնցում հայերը ազգաբնակչության ստվարաթիվ տարր էին կազմում»<sup>11</sup>:

Հեղինակի հավաստմամբ դեռ Հերոդոտի ժամանակներից Ասիայի այս հատվածը Հայաստան անունն էր կրում: Հայ ժողովուրդը երեք հազար տարի շարունակ ապրել էր այդ տարածքում: Մորգենթաուն հավաստում է, որ թուրքի բռնապետության տակ ընկած Հայաստանը հայերի բռնաբարված հայրենիքն է և դա հաստատված է հայկական ամենամեծ քաղաքի՝ Վանի հնագույն սեպագիր արձանագրություններով: Դեսպանը հավաստում է նաև, որ հայերը Օսմանյան կայսրության արևելյան հատվածի ամենաքաղաքակիրթ ազգն են, որ նրանք դեռ չորրորդ դարում են ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն, հետևապես Հայկական քրիստոնյա

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 136:

<sup>11</sup> Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, p.137:

եկեղեցին հնագույնն է աշխարհում<sup>12</sup>: Մորգենթաուն շեշտում էր նաև, որ հայերն իրենց դրսևորել են որպես եվրոպացիներ, որ գիտնականները նրանց դիտում են որպես հնդեվրոպական լեզվով արիական ծագում ունեցող ժողովուրդ:



*Համայնապատկեր Հայաստանից*

Մորգենթաուի հավաստմամբ Աբդուլ-Համիդը որոշեց հայկական հարցից «ազատվելու» համար՝ երկիրը «մաքրել» հայերից: Դեսպանը վկայում էր, որ թուրքական հայասպան քաղաքականությունն ուներ պետականորեն կազմակերպված բնույթ: «Պետության կողմից կազմակերպված և ղեկավարած ջարդով 2.000.000 մարդկանց, կանանց, տղամարդկանց բնաջնջումը նրանց միակ միջոցը թվաց՝ թուրքական կայսրության հետագա քայքայումը կանխելու համար»<sup>13</sup>: Դեսպանի վկայությամբ 1895-96թթ. ընթացքում Աբդուլ Համիդի ջարդարարական քաղաքականությանը զոհ գնացին 200.000 հայեր\*: Ըստ հեղինակի հայերի կյանքը դարեր շարունակ եղել է մղձավանջային, նրանց ունեցվածքը անպատիժ թալանվում, թալանում, կանայք ու աղջիկները հարեմ էին տարվում: Այս քաղաքականության շարունակությունը դեսպանը համարում էր Ադանայի զարհուրելի ջարդերը, որոնց ընթացքում ոչնչացան 35.000 հոգի: Գրքում բացահայտված են նաև թուրքական ջարդարարական քաղաքականության շատ ուրիշ կողմեր:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 138:

<sup>13</sup> Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, p.138:

\* Իրականում այդ տարիներին թուրքիայում ոչնչացվել էր 300.000 հայ:

Աշխատության այս գլխի վերջում հեղինակը անդրադարձել է նաև այս ամենի մեջ գերմանական քաղաքականության խաղացած դերին, քաղաքականություն, որը մեծապես նպաստել է, որպեսզի թուրքերը Հայաստանը վերածեն «իրենց հայրենիքի»:

Աբդուլ Համիդի նախաձեռնած հայկական կոտորածներին հաջորդում էին հայերի նկատմամբ նոր հալածանքներ: Եվրոպական պատերազմի շեմին /նկատի ունի առաջին համաշխարհային պատերազմը/ օր չէր անցնում առանց հայերի նկատմամբ հալածանքների:

Հեղափոխությունից ընդամենը մի քանի ամիս անց երիտթուրքերը շարունակեցին իրականացնել աբդուլհամիդյան գաղափարները և ավելի դաժան կոտորածներ իրականացվեցին Ադանայում, ուր սպանդի ենթարկվեց ավելի քան 35.000 մարդ<sup>14</sup>:

1890-ական թթ. թուրքական պետությունը ստանում էր կայսերական Գերմանիայի աջակցությունը: Ահա 1898թ. Կայսր Վիլհելմ Երկրորդը ժամանելով Կոստանդնուպոլիս խրախուսում է համիդյան ջարդարար քաղաքականությունը: Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն ընձեռեց «Թուրքիան դարձնել թուրքերինը»<sup>15</sup>:




*Ձկնորսական բնակավայր Վանա լճի ափին:  
Այս գավառում ավելի քան 55.000 հայեր են կոտորվում*

<sup>14</sup> Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, p.138.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 139:



Դեսպան Սորգենթաուն բազմաթիվ հաղորդագրություններ էր հղել իր կառավարությանը, որոնցում ներկայացվել էին հայերի նկատմամբ կատարված «ցեղի ոչնչացման արշավի» ընթացքում տեղի ունեցած ամենասարսափելի գազանությունները<sup>16</sup>: Սիս դրանցից մեկը.



<sup>16</sup> <http://en.wikipedia.org/wiki/File:AmbassadorMorgenthautelegram.jpg>

Աշխատության 23-րդ գլխում, որը կրում է «Յեղափոխությունը Վանի մեջ» խորագիրը, Մորգենթաուն ներկայացնում է Վանի նահանգի հայության բնաջնջումը թուրքական բանակի կողմից՝ ռուսական զորքերի նահանջից հետո:

Վանի հայկական գյուղերի բնակչությունը, Ահասարսուռ սպանդի ենթարկվեց: Գեղեցիկ հայ կանայք բաժանվեցին մահմեդականների միջև: Չորս օր անընդմեջ հայկական գյուղերը ջարդի և թալանի ասպարեզ էին:



*Գաղթականներ Վանի շրջանից, որոնք հույս ունեին ստանալ հաց, արտաքսվելով իրենց բնակավայրերից արտրվեցին անապատ: Հագարավոր երեխաներ, կանայք և տղամարդիկ սպանդի ենթարկվեցին:*

Մորգենթաուն հայ երիտասարդների սպանությունը այսպես է ներկայացնում. «Ապրիլի 15ին 500-ի չափ երիտասարդ հայեր կանչվեցին Ականցեն, ողջունելու Սուլթանին. արևանուտին նրանք քաղաքից դուրս հանվեցին և անգթորեն հրացանազարկ սպանվեցին: Վանա լիճից հյուսիս գտնվող ութսունի չափ հայկական գյուղերի մեջ իրականացվեց կոտորած, որը կրկնվեց ու վայրագ ձևով երեք օրվա մեջ 24,000 Հայեր սպանվեցին»<sup>17</sup>:

Հուշագրության մեջ մանրամասնորեն ներկայացված է Ջևդեթ Բեյի գործողությունները Վանի հայությանը բնաջնջելու ուղղությամբ: Յեղիմակի հիացմունքն է առաջացրել հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը և հինգշաբաթյա մարտերից հետո ռուսական զորքերի մուտքը Վան և թուրքերի

<sup>17</sup> Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, p.141:  
<http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/comment/morgenthau/MorgenTC.htm>

փախուստը: Սարսռագրու է Վանի ամերիկյան միսիոներ դոկտոր Աշերի (ամերիկյան բժշկական միսիոներ) վկայությունն առ այն, որ «երբ ռուսական զորքերը սկսեցին ողջ նահանգում հավաքել սպանված հայերի դիերը, ապա հրկիզված դիակների թիվը հասնում էր 55.000-ի»<sup>18</sup>:

Դեսպան Մորգենթաուն հայերի եղեռնագործությունը ավելի ցնցող գույներով է նկարագրում հուլիսի 24-րդ գլխում: Մանրամասնելով քրիստոնյաների նկատմամբ Օսմանյան կառավարության քաղաքականությունը, նա նշում է, որ բանակ զորակոչված հայ երիտասարդները զինաթափ արվեցին և օգտագործվեցին որպես բանվորական աշխատուժ: 50-100-ական հոգանոց խմբերով նրանց դուրս էին բերում և ամայի վայրում սպանդի ենթարկում: Հայերի ջարդի հիշողությունները այնքան շատ են Մորգենթաուի մոտ, որ նույնիսկ հեղինակը հրաժարվում է դրանց մի մասը նկարագրելուց: Վանի կուսակալ Ջևդեթ Բեյի մասին գրում է, թե «նա Բաշկալեի պայտահարն է»՝ հայ զոհերի ոտքերին պայտեր գամելու համար:



*Գաղթի ճանապարհին նախճիրի ենթարկված հայերի դիակներ*

<sup>18</sup> Նույն տեղում ,էջ 142:

Մորգենթաուն հիշատակում է, որ Օսմանյան կայսրության կառավարությունը հրապարակ հանեց իր մտադրությունը կայսրության տարբեր հատվածներում բնակվող 2.000.000-ից ավելի հայերին անապատային երկրամասեր «տեղափոխելու» համար: Հստակ արտացոլված և մեկնաբանված է այն հանգամանքը, որ հայերի նկատմամբ կառավարության մտադրությունը ոչ թե գաղթի իրականացումն էր, այլ ամբողջ ցեղի մահվան վճիռը<sup>19</sup>: Բազմաթիվ էջեր մանրամասնորեն ներկայացնում են հայերի աքսորն ու տեղահանության սարսափազդու տեսարանները «Գյուղ գյուղի ետևից և քաղաք քաղաքի ետևից, դատարկվեց իր հայ բնակչությունից, արդեն մանրամասնորեն նկարագրված տխուր պայմանների մեջ: Ստուգված տվյալների համաձայն, այս վեց ամսվա ընթացքում 1,200,000 ժողովուրդ դեպի սիրիական անապատը գաղթի ճանապարհ ելավ»<sup>20</sup>:



*Սպանդի ենթարկված հայերի մասունքներ երզնկայում*

Թուրքական կառավարության իրական մտադրությունը արտացոլված է հետևյալ տողերում «Անհմաստ են թուրքական կառավարության հավաստիացումներն առ այն, թե նպատակ ունեին հայերին նոր բնակավայրեր փոխադրելու, իսկ էնվերի և

<sup>19</sup> Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, p.138.  
<http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/comment/morgenthau/MorgenTC.htm>  
<sup>20</sup> Նույն տեղում, էջ 149,  
<http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/comment/morgenthau/MorgenTC.htm>

Թալեաթի արքայականների նկատմամբ վերաբերմունքը ակնհայտ էր դարձնում հայերին բնաջնջելու իրական նպատակը»<sup>21</sup>:

Հայկական եղեռնագործության հարցում Թալեաթի, Էնվերի սառնասիրտ քաղաքական վարքագիծ դրսևորելու մասին մանրամասնությունները Մորգենթաուն ներկայացնում է 25-րդ և 27-րդ գլուխներում:

Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի վկայությունները Հայոց Ցեղասպանության անհերքելի ապացույց են և փաստերի տեսանկյունից վկայում են պետականորեն ծրագրված սպանդի մասին:

---

<sup>21</sup> Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, p.150.  
<http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/comment/morgenthau/MorgenTC.htm>

## Resume

Humanity entered the 20<sup>th</sup> century with important achievements. There were certain essential progressive steps made also by the Armenians. Yet the 20<sup>th</sup> century became famous not only by great progress but also by disasters as well as cultural and human losses caused by two World Wars.

Armenian Genocide has certain undeniable proofs in the documents of the state archives – Turkish (Talaat Pasha, Enver Pasha and others), of ally countries (Great Britain, France, Russia), German, Austrian, American, etc.

A special importance is being acquired by the documentary evidence mentioned by those foreigners who were in Turkey due to their diplomatic and missionary work.

Such valuable documentary evidence is present in the well-known work by Henry Morgenthau who used to be the Ambassador of the USA to the Ottoman Empire.

Henry Morgenthau condemned Armenian Genocide qualifying it as ‘the nation’s extermination campaign’. This policy was encouraged by Robert Lansing, the State Secretary of the USA, who announced that ‘the Department approves of your actions, namely to stop the prosecution of the Armenians’.

According to the Ambassador of the USA to the Ottoman Empire the Turkish policy of the Armenian omnicide had been organized by the government. ‘The massacre of 2.000 000 people, men and women, organized and leaded by the Turkish government seemed the only way to prevent the future collapse of the Ottoman Empire’. The real intentions of the Turkish Government are reflected in the following lines: ‘The assurances of the Turkish Government that they aimed at deportation of the Armenians to the new territories are unreasonable, and Tallat’s and Enver’s treatment of the exiles made obvious the real goals of the Armenian Genocide’.

The evidence presented by Henry Morgenthau, the Ambassador of the USA to the Ottoman Empire, seemed undeniable facts of the Armenian Genocide, which was a government-organized slaughter.

## Резюме

Человечество вступило в XX-ый век с важными достижениями. Армянский народ также сделал определенные прогрессивные шаги, имеющие жизненно важное значение. XX век запомнился огромными достижениями, но эти достижения были омрачены двумя мировыми войнами, приведшими к обширным разрушениям, культурным и человеческим потерям.

Неопровержимые доказательства Геноцида армян содержатся не только в государственных архивных документах, но и в турецких (приказы Талаат-паши, Энвера и др.), стран союзников (Великобритания, Франция, Россия), немецких, австрийских, американских и др.

Особое значение приобретают те фактически документальные свидетельства, которые приводятся иностранцами, занимающимися в Турции миссионерской или дипломатической деятельностью.

Такие бесценные документальные материалы содержатся в свидетельских трудах посла США в Османской империи Генри Моргентау.

Генри Моргентау осудил Геноцид армян, как “поход уничтожения нации”. Эту политику поддержал Госсекретарь США Роберт Ленсинг сообщив, что “Департамент одобряет Вашу деятельность прекратить гонения армян”.

Согласно послу США политика турок по уничтожению армян имела организованный государственный характер.”Организованный и руководимый со стороны государства погром 2.000.000 армян, уничтожение женщин, мужчин казалось им единственным способом предотвратить дальнейшее разрушение турецкой империи. Истинное намерение турецкого правительства отражено в следующих строках “Бессмысленны заверения турецкого правительства, что она имела намерение депортировать армян в новые места жительства, а отношение к депортированным Энвера и Талаата делает очевидным истинную цель уничтожения армян”.

Свидетельства американского посла Генри Моргентау являются неспоримым доказательством Геноцида армян и факты свидетельствуют о спланированных государством погромах.



## Գրականություն

- հայերեն
  1. «Ամերիկյան Դեսպան Ջենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական Եղեռնի գաղտնիքները» , Երևան, Լույս, 1990թ., 350 էջ:
- անգլերեն
  1. Ambassador Morgenthau's Story, by Henry Morgenthau, Garden City New York, Doubleday, Page & Company, 1918, 191 p..
- ռուսերեն
  1. Трагедия армянского народа. История посла Моргантау, Генри Моргантау, Издательство: Центрполиграф, (2009 г.), 336 стр..
- Էլեկտրոնային
  1. <http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/comment/morgenthau/MorgenTC.htm>
  2. <http://en.wikipedia.org/wiki/File:AmbassadorMorgenthautelegram.jpg>
  3. <http://www.eleven.co.il/article/12839>
  4. <http://ru.wikipedia.org.1>
  5. <http://www.genocide-museum.am>
  6. <http://freebooks.do.am>
  7. <http://NEWS.am>
  8. <http://www.kniga.ru/books/313910>
  9. [http://manybooks.net/pages/morgenthauhothor09ambassador\\_morgenthaus\\_story/](http://manybooks.net/pages/morgenthauhothor09ambassador_morgenthaus_story/)
  10. <http://www.scribd.com/doc/14191778/Ambassador-Morgenthaus-Story-1918>